

ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ (ԲՍՄՊ) ՆԱԽԱԳԻԾ

ՍԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՐՅՈՒՍԻՍ-ՅԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱՊԱՐՅԱՐԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ



Արբյուր՝ նկարները Սիսիան-Քաջարան առաջարկվող ճանապարհի 3D հոլովակից, ճանապարհային դեպարտամենտ, 2022
[<https://www.youtube.com/watch?v=fu-dgAwjSsU>]

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ (ԲՍՄՊ) ՆԱԽԱԳԻԾ

ՄԻՍԻԱՆ-ՔԱԶԱՐԱՆ (ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔ) ՃԱՆԱՊԱՐՀԱՅԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Մշակված է



Ecoline
International

Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ
(Սոֆիա, Բուլղարիա)



SE SOLUTIONS
Advancing Environmental Sustainability

ՍԻ Ի Սոլյուշնս ՍՊԸ (ՀԱՀ)

Տնօրեն. Շոն Օ Բեյրն
Հեռ. +27 (0)12 643 0190
+27 (0)82 903 9751

Էլ.փոստ.
sobeirne@tiscali.co.za



ATMS Solutions

ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս ՍՊԸ
(Երևան, Հայաստան)

Տնօրեն. Արտակ Տեր-Թորոսյան
Հեռ. +37491 497128
+37499 109495

Էլ.փոստ.
artak.ter-torosyan@atms.am



Տնօրեն. Մայա Գաչեչիլաձե-
Բոժենկո
Հեռ. +38095 11 00 727 / + 359
876 63 0522
Էլ.փոստ.
mgachechiladze@ecoline-int.org

Մշակվել է

Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային
դեպարտամենտ» հիմնադրամի համար

© Էկոլայն Ինթերնեյշնլ ՍՊԸ, 2023

Բոլոր իրավունքները պահպանված են:
Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի օգտագործումը կարող
է կատարվել միայն հղում անելով սկզբնաղբյուրին:



Ecoline
International



SE SOLUTIONS
Advancing Environmental Sustainability



ATMS Solutions

ՓԱՍՏԱԴԹԹԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Տարբերակ	Հրապարակման ամսաթիվը	Նկարագիր
1	05.06.2023	Վարկատուների և պատվիրատուի վերանայման տարբերակ
2	22.06.2023	Վարկատուների և պատվիրատուի հաստատման համար տարբերակ, հայերեն թարգմանության և հրապարակման համար
3	27.06.2023	Վարկատուների և պատվիրատուի հաստատման համար վերջնական տարբերակ, հայերեն թարգմանության և հրապարակման համար

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԿՄՊ	Կենսաբազմազանության Միջոցառումների Պլան
ԲևՍ	Բնապահպանական և Սոցիալական
ՎԶԵԲ	Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկ
ՇՄԱԳ	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ԵՆԲ	Եվրոպական Ներդրումային Բանկ
ԲՍՄՊ	Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլան
ՇՄՍԱԳ	Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցություն Գնահատում
ԲՍԿՊ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԲՍԿՀ	Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ
ԲՍՍ	Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտ (ԵՆԲ-ի)
ԵՄ	Եվրոպական Միություն
ԼՄԳ	Լավագույն Միջազգային Գործելակերպ
ՄՖԿ	Միջազգային Ֆինանսական Կորպորացիա
ՏԿԵՆ	Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն
ՇՄՆ	Շրջակա Միջավայրի Նախարարություն
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ՀՀԾՄ	Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցք
ՈՏԱ	Ոչ-Տեխնիկական Ամփոփագիր
ԱԱ	Աշխատանքի Անվտանգություն
ԻՊ	Իրագործման Պահանջներ (ՎԶԵԲ-ի)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՃԴ	Ճանապարհային Դեպարտամենտ
ՀՀՏԿ	Հողային Հանույթի Տեղադրման Վայր
ՇՆՊ	Շահառուների Ներգրավվածության Պլան
ՀԲՍԿՊ	Հատուկ Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլան
ԱՊ	Անվտանգության Պահանջներ (ԱԶԲ-ի)

ԲՆԱԿԱՅԴԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ կամ նախածեռնող) "Ճանապարհային դեպարտամենտ" հիմնադրամը (ՃԴ) հանդիսանում է Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի (ՀՀՃՄ) Սիսիան-Քաջարան 60 կմ երկարությամբ ճանապարհատարածի կառուցման ծրագրի (Ծրագիր) իրականացնող մարմինը: Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկը (ՎՉԵԲ կամ "Բանկ") դիտարկում է Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու կամ ՀՀ) տրամադրել սուվերեն վարկ Ծրագիրը ֆինանսավորելու համար: Ծրագրի այլ հնարավոր վարկատուներն են՝ Եվրոպական Ներդրումային Բանկը (ԵՆԲ) և Ասիական Չարգացման Բանկը (ԱՉԲ): Ներդրումային դրամաշնորհի տրամադրվելու է նաև Եվրոպական Միության հարևանության ներդրումային հարթակից:

Ստորև ներկայացված Բնապահպանական և Սոցիալական Միջոցառումների Պլանը (ԲՍՄՊ) մշակվել է Ծրագրի համար՝ Վարկատուների պահանջների համաձայն: ԲՍՄՊ-ը հիմնված է Շրջակա Միջավայրի վրա և Սոցիալական Ազդեցության Գնահատման (ՇՄՍԱԳ) համապատասխանության վերլուծության վրա, որն իրականացվել է Ծրագրի (2023թ.) բաղադրիչների՝ կիրառելի իրավանորմատիվային պահանջներին համապատասխանելիության գնահատման արդյունքում և ներառում է.

- ՎՉԵԲ-ի ԲևՍ քաղաքականությունը (2019թ.) և դրանով սահմանված իրագործման Պահանջները (ԻՊ),
- ԵՆԲ-ի ԲևՍ քաղաքականությունը (2022թ.) իր Բնապահպանական և Սոցիալական Ստանդարտներով (ԲՍՍ),
- ԱՉԲ-ի քաղաքականությունները, ներառյալ Անվտանգության քաղաքականության հայտարարագիրը (2009թ.) և համակցված Անվտանգության Պահանջները (ԱՊ):

Ֆինանսավորման վերաբերյալ Վարկատուների որոշումը կկայացվի ՇՄՍԱԳ փաթեթի 120-օրյա հրապարակման ժամկետի ավարտից հետո:

ԲՍՄՊ-ը համապարփակ փաստաթուղթ է, որը նկարագրում է այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացումը Վարկատուների պահանջներին և Հայաստանի ազգային օրենսդրությանը համապատասխանեցնելու համար:

ՃԴ-ը՝ ՏԿԵՆ և ՀՀ անունից, պատասխանատու կլինի Ծրագրի և ԲՍՄՊ-ի իրականացման համար:

Բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան՝ Սիսիան-Քաջարան ճանապարհահատված, Հայաստան

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
1	Բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում (ՎՁԵԲ ԻՊ1, ԵՆԲ ԲՍՍ1, ԱՁԲ ԱՊ1)					
1.1	<p>Մշակել և իրագործել Ծրագրի համապարփակ բնապահպանական, առողջության և անվտանգության և սոցիալական կառավարման համակարգը (ԲՍԿՀ) (այսպես կոչված «Ծրագրի ԲՍԿՀ»), ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> Բնապահպանական, առողջության և անվտանգության և սոցիալական քաղաքականությունը, Կազմակերպչական կառուցվածքի մանրամասները և գծապատկերը, Կապալառուի և մատակարարի կառավարման ընթացակարգը (ԲևՍ, ներառյալ առողջություն և անվտանգություն արդյունավետությունը կառավարելու համար), Շրջանակային Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Պլանը (ԲՍԿՊ), ԲևՍ մշտադիտարկման և հաշվետվողականության շրջանակը (ներառյալ ԲՍԿՊ-ի ԲևՍ մշտադիտարկման պլանը), Անհամապատասխանությունների, բողոքների և միջադեպերի լուծման ընթացակարգեր, Փոփոխությունների կառավարման ընթացակարգը՝ ապահովելու համար, որ Ծրագրի սկզբնական նախագծման, հզորության, տեղակայման կամ գործընթացի տեխնոլոգիայի ցանկացած փոփոխություն ենթակա է բնապահպանական և սոցիալական գնահատումների, իսկ նոր ազդեցությունները պատշաճ կերպով 	<p>ԲևՍ բոլոր ռիսկերն ու օգուտները:</p> <p>ԲևՍ կառավարման համակարգում և օպտիմալացում:</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ1 ԵՆԲ ԲՍՍ1 ԱՁԲ ԱՊ1</p> <p>Լավագույն միջազգային գործելակերպ</p>	<p>ՃԴ-ն ԾԻԳ խորհրդատուի և Վերահսկող ինժեների հետ</p>	<p>ԲՍԿՀ-ի մշակում՝ նախքան շինարարական կապալառուի մոբիլիզացումը:</p> <p>Իրականացում՝ շինարարության ընթացքում՝ կապալառուների համապատասխանության վերանայման միջոցով, այնուհետև իրականացում Ծրագրի գործունեության ընթացքում:</p>	<p>Համապատասխան փաստաթղթերը մշակվել և ընդունվել են:</p> <p>Փոփոխությունների կառավարման կարգն ընդունված է՝ Վարկատուների կողմից հաստատվելուց հետո: Եական փոփոխությունների մասին զեկուցվել է Վարկատուներին՝ համաձայնություն ստանալու համար:</p> <p>ԲՍԿՀ-ի իրագործում, մշտադիտարկում և վերանայում/թարմացում, ըստ անհրաժեշտության: Ընթացիկ հաշվետվություններ:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>կարծազանքվեն և կմեղմացվեն՝ Վարկատուի ԲևՍ պահանջներին համապատասխան: Ցանկացած էական փոփոխություն դեպքում կպահանջվի Վարկատուներից համաձայնություն ստանալու համար,</p> <ul style="list-style-type: none"> Շահառուների ներգրավման պլան և բողոքարկման մեխանիզմ (տես Միջոցառում 8.1): <p>Ծրագրի ԲՍԿԳ-ը և ԲՍԿԴ-ը ինտեգրել կապալառուների միջև՝ պայմանագրային պարտավորեցնելով Կապալառուին իրագործել Ծրագրի ԲՍԿԳ-ը: Հստակ սահմանել դերերը և պատասխանատվությունը՝ ԲՍԿԳ-ի և ԲՍԿԴ-ի իրականացման համար:</p> <p>Շինարարության ընթացքում համապատասխան պահանջները պետք է դարձնել կապալառուների պատասխանատվությունը, որը վերահսկվում է ԾԻԳ-ի խորհրդատուի և Վերահսկող ինժեների կողմից, իսկ շահագործման փուլում՝ ՃԴ-ի կողմից:</p> <p><i>[Նշում՝ համակարգը(երը) ընդհանուր առմամբ պետք է բավարարեն ISO 14001 և ISO 45001 ստանդարտների նպատակներին, սակայն ոչ սերտիֆիկացված լինեն:</i></p>					
1.2	<p>Իրագործել Ծրագրի ԲՍԿԳ-ը, ներառյալ քաղաքականությունը, ընթացակարգերը և մեղմացման միջոցառումներն ու պահանջները, որոնք ներառված են Ծրագրի ԲՍԿԴ-ում:</p> <p>Մշակել և իրականացնել շինարարության փուլի Հատուկ ԲՍԿԴ-երը (ՀԲՍԿԴ)՝ համապատասխանեցնելով Վարկատուի պահանջներին, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ փաստաթղթերով՝</p>	<p>Շինարարության ընթացքում Ծրագրի ԲևՍ-ի, ներառյալ առողջության և անվտանգության, ռիսկերի և ազդեցությունների նվազեցում</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ 1-6 և 8 ԵՆԲ ԲՍՍ 1, 3-10</p> <p>ԱՁԲ ԱՊ1 - Անվտանգության քաղաքականության հայտարարագիր</p>	<p>Կապալառուին մշակում է ՀԲՍԿԴ-ները</p> <p>Կապալառուին (և իր ենթակապալառուները) իրագործում են ՀԲՍԿԴ-ները</p> <p>ՃԴ՝ տալիս է իր համաձայնությունը</p>	<p>Մշակել մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Կապալառուին ներկայացնում է ԲՍԿԳ-ը ու ՀԲՍԿԴ-երը ՃԴ-ին և Վերահսկող ինժեներիին աշխատանքների մեկնարկից առնվազն 30 օր առաջ,</p>	<p>Կապալառուի հետ պայմանագիրը հաստատվել է Վարկատուների կողմից, որին կցվում է Ծրագրի ԲՍԿԴ-ը:</p> <p>Կապալառուի ԲՍԿԳ-ը և ՀԲՍԿԴ-ը հաստատվել են ՃԴ-ի և Վերահսկող ինժեների կողմից և</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<ul style="list-style-type: none"> • Օդի որակի կառավարման պլան, • Հողի բերրի շերտի կառավարման պլան, • Թափոնների կառավարման պլան (ներառյալ Հողային հանույթի տեղադրման ենթապլանը), • Էրոզիայի վերահսկման պլան, • Շեպերի կայունացման պլան (պահանջվում է գեո-վտանգների ռիսկերի գնահատմամբ, տես Միջոցառում 4.3-ը), • Կեղտաջրերի և հեղեղաջրերի կառավարման պլան, • Աղմուկի և թրթռումների կառավարման պլան (ներառյալ պայթեցումների կառավարման պլանը), • Արտահոսքերի կառավարման պլան, • Վտանգավոր նյութերի կառավարման պլան, • Թունելային ջրերի կառավարման պլան (ներառյալ ստորերկրյա ջրերի հեռացումը թունելներից), • Երթևեկության կառավարման պլան (ներառյալ ճանապարհային աուդիտ և վիճակի հետազոտություն, ճանապարհների ժամանակավոր ենթապլաններ և մուտքի և տեղական կապի պլան), • Համայնքի, առողջության և աշխատանքի անվտանգության պլան, • Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան (որպես աշխատողների բնակեցման պլանի ենթապլան և աշխատողների բողոքարկման մեխանիզմ), • Աշխատողների վարքագծի կանոններ, • Մշակութային ժառանգության կառավարման պլան, • Պատահական գտածոների ընթացակարգ, • Արտակարգ իրավիճակների 	<p>Լավագույն միջազգային գործելակերպ</p> <p>Ազգային օրենսդրություն</p>	<p>Վերահսկող ինժեները հաստատում է ՀԲՍԿՊ-ները</p> <p>ԾԻԳ խորհրդատուն վերանայում է</p> <p>Վերահսկող ինժեները և ՃԴ-ն մշտադիտարկում են ՀԲՍԿՊ-ի արդյունավետությունը:</p>	<p>Վերահսկող ինժեները հաստատում է, իսկ ՃԴ-ն համաձայնեցնում է դրանք մինչև շինարարության մեկնարկը:</p> <p>Դեմոբիլիզացման պլանի համար՝ ընդունում շինարարության առաջին 6 ամիսների ընթացքում: Իրականացում - շինարարության ընթացքում:</p>	<p>Մշտադիտարկման հաշվետվություններ Վերահսկող ինժեների և կապալառուի կողմից:</p> <p>Մշտադիտարկման արդյունքները՝ ԲևՍ մշտադիտարկումների հաշվետվությունների տեսքով ներկայացված է Վարկատուներին:</p>	<p>այնուհետև իրագործվել է:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>պատրաստության և արձագանքման պլան,</p> <ul style="list-style-type: none"> • Ինվազիվ տեսակների կառավարման պլան (ինչպես նշված է Կենսաբազմազանության միջոցառումների պլանում), • Ռեկուլտիվացման/հողերի վերականգնման պլան (ժամանակավոր օգտագործվող տեղամասերի համար), • Շինարարական ճամբարի կառավարման պլան (հիմնված բնակեցման տարբերակների ռիսկի գնահատման վրա), • Բետոնի գործարանի կառավարման պլան, • Ասֆալտի գործարանի կառավարման պլան, • Գնումների պլան, • Կոմունալ ծառայությունների պաշտպանության և տեղափոխման պլան, • Դեմոբիլիզացման պլան, • Ծրագրի համար աշխատուժի հավաքագրման քաղաքականություն, • Հավաքագրման պլան: <p>Վերանայել վերը նշված պլանները՝ հիմնվելով լրացուցիչ ԲևՍ գնահատումների, ռեսուրսասիրությունների, մշտադիտարկման արդյունքների և այլնի վրա: Վերանայված տարբերակները նույնպես պետք է հաստատվեն ԾԻԳ-ի ու Վերահսկող ինժեների և ստանան համաձայնություն ՃԴ-ի կողմից:</p>					
1.3	<p>Ապահովել, որ ենթակապալառուները համապատասխանում են վարկատուների նույն կիրառելի չափանիշներին և հետևում են Կապալառուի կողմից մշակված ԲՍԿՍ-ի և շինարարական ՅԲՍԿՊ-երի պահանջներին, հետևյալի միջոցով՝</p> <p>i) ներառելով հատուկ դրույթները Կապալառուի պայմանագրի մեջ, և</p>	<p>Շինարարության ընթացքում Շրագրի ԲևՍ-ի, ներառյալ առողջության և անվտանգության, ռիսկերի և ազդեցությունների նվազեցում</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ1 ԵՆԲ ԲՍՍ1 ԱՁԲ ԱՊ1</p>	<p>i) ՃԴ հաստատում է, որ պայմանագրային կարգավորումները կատարված են:</p> <p>ii) Կապալառուն մշտադիտարկում է այդ պահանջների իրագործումը</p>	<p>i) Մինչ պայմանագրի ստորագրումը:</p> <p>ii) Շինարարության փուլում՝ մինչ հատուկ ենթակապալառուների ստորագրումը:</p>	<p>i) Հատուկ դրույթները ներառված են Կապալառուի՝ ՃԴ-ի հետ պայմանագրերում:</p> <p>ii) Հատուկ դրույթներ, որոնք ներառված են Կապալառուի հետ պայմանագրերում և կապալառուների</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	ii) Ներառելով հատուկ դրույթները ենթակապալառուների հետ բոլոր պայմանագրերում:			Ենթակապալառուների կողմից:		մշտադիտարկման հաշվետվություններում: Կապալառուի հավաստումը, որ իրենց ենթակապալառուներն ունեն ԲՍԿՅ և բավարար կարողություններ՝ ԲՍԿՅ-ը իրագործելու համար և ԲՍԿԴ-ի պահանջները՝ համաձայն Կապալառուի հիմնական պայմանագրի դրույթների:
1.4	<p>i) Մշակել կազմակերպչական կառուցվածքի շրջանակ ԲևՍ (ներառյալ առողջություն և անվտանգություն) գործառնությունների համար, ներառյալ դերերն ու պարտականությունները ՃԴ-ի շրջանակներում, հաղորդակցման շրջանակը (ՃԴ-ի, ԾԻԳ-ի և կապալառուների միջև) և որոշումների կայացման գործընթացի նկարագրությունը:</p> <p>ii) ՃԴ-ն ապահովում է, որ ՃԴ-ը կունենա բավարար անձնակազմ (առնվազն երեք մասնագետ՝ բնապահպանական, ներառյալ ԱԱ, սոցիալական և շահառուների ներգրավվածության (տես նաև Միջոցառում 8.2-ը)) ազգային և միջազգային ԲևՍ չափանիշների համապատասխան իրավասություններով՝ Ծրագրի իրականացման համար:</p> <p>iii) ՃԴ-ն ապահովում է, որ Կապալառուն կունենա բավարար անձնակազմ՝ Ծրագրի իրականացման համար և համապատասխան ազգային և միջազգային ԲևՍ ստանդարտների իմացությամբ, որն օժտված է լինելու հատուկ դերերով բնապահպանական, սոցիալական պաշտպանության և տարաբնակեցման, կենսաբազմազանության</p>	<p>Ծրագիրը կիրառելի չափանիշներին համապատասխան իրականացնելու կարողություն:</p> <p>Որոշումների կայացման հստակ և արդյունավետ գործընթացներ:</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ1 ԵՆԲ ԲՍՍ1 ԱՁԲ ԱՊ1</p>	ՃԴ	<p>I-ին և ii-րդ՝ մինչ աշխատանքների մրցույթը:</p> <p>iii-րդ և iv-րդ պայմանագրի կնքման ընթացքում:</p>	<p>i) Ընդունված և իրագործված կազմակերպչական շրջանակը,</p> <p>ii) ՃԴ-ի անձնակազմը, որը պատշաճ կերպով ծածկում է անհրաժեշտ իրավասությունները և կարող է տեղում կառավարել կապալառուներին,</p> <p>iii) Համապատասխան փորձառությամբ Կապալառուի խումբ,</p> <p>iv) Համապատասխան փորձառությամբ Վերահսկող ինժեների խումբ:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>(տես նաև Միջոցառում 6.2-ը), մշակութային ժառանգության և համայնքային առողջության ու աշխատանքի անվտանգություն (կախված աշխատողների թվից) ոլորտներում:</p> <p>iv) Ապահովել, որ Վերահսկող ինժեները կունենա բավարար անձնակազմ՝ Ծրագրի իրականացման համար և համապատասխան ԲևՍ ստանդարտների իմացությամբ (ներառյալ՝ միջազգային բնապահպանական ու աշխատանքի անվտանգության փորձագետի և ազգային շրջակա միջավայրի, սոցիալական, տարաբնակեցման, կենսաբազմազանության, մշակութային ժառանգության, համայնքային առողջության ու աշխատանքի անվտանգություն մասնագետների համատեղ ներկայությամբ):</p>					
1.5	<p>Իրականացնել տարածքի ընտրություն, ԲևՍ հետազոտություններ, գնահատում և նախագծման աշխատանքներ Հողային Հանույթի Տեղադրման Վայրերի (ՀՀՏԿ), դրանց մուտքի ճանապարհների, շինարարական ճամբարների, տեղակայման վայրերի, էլեկտրահաղորդման գծի, ջրամատակարարման և Ծրագրի այլ բաղադրիչների համար, որոնք ներկայումս հստակեցված չեն՝ ՇՄՍԱԳ-ում / ԲՍԿՊ-ում սահմանված առաջարկություններին համապատասխան:</p> <p>Օբյեկտների տեղակայման վայրերը պետք է հաստատվեն Սիսիան և Զաջարան համայնքների իշխանությունների, Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), Վերահսկող ինժեների և Վարկատուների կողմից՝ տեղական ազդակիր շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններից հետո:</p> <p>Միջոցառում 1.6-ի (գեո-վտանգի գնահատում) արդյունքները պետք է հաշվի առնվեն</p>	<p>ԲևՍ ազդեցությունների կառավարում, որոնք կապված են ՀՀՏԿ-ների և Ծրագրի այլ բաղադրիչների հետ և որոնց գտնվելու վայրը ներկայումս հստակեցված չէ</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ1 ԵՆԲ ԲՍՍ1 ԱԶԲ ԱՊ1 Ազգային օրենսդրություն Լավագույն միջազգային գործելակերպ</p>	<p>Կապալառու՝ մշակում / իրականացում: ՃԴ և Վերահսկող ինժեներ՝ վերանայում և հաստատում:</p>	<p>Նախքան կոնկրետ վայրերում շինարարության մեկնարկը</p>	<p>Լրացուցիչ ԲևՍ փաստաթղթեր, որոնք ներկայացված և հաստատված են ՃԴ-ի և Վարկատուների կողմից: Եթե կիրառելի է, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություններ (կամ թույլտվություններ) ստացված ՇՄՆ-ից: Վարկատուների կողմից բոլոր օբյեկտների գտնվելու վայրի վերաբերյալ ստացված համաձայնություն:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
1.6	<p>Ավարտել լրացուցիչ երկրաբանական հետազոտությունները և երկրաբանական վտանգի նույնականացումն ու գնահատումը:</p> <p>Անհրաժեշտության դեպքում թարմացնել Ծրագրի նախագիծը և Շեպերի կայունացման պլանը՝ հիմնվելով այս ուսումնասիրության արդյունքների վրա:</p>	<p>Ճանապարհային երթևեկության անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացում</p>		<p>ՎՉԵԲ-ի կողմից վարձված անկախ տեխնիկական խորհրդատու:</p> <p>ՃԴ-ի և Վարկատուների կողմից տրամադրված ռեսուրսներ՝ արդյունքներն իրագործելու համար:</p>	<p>Մինչ շինարարության մեկնարկը</p>	<p>Երկրատեխնիկական հաշվետվության և մանրամասն նախագծային փաստաթղթերը հաստատված են Վարկատուների, ՃԴ-ի և աջակցողի կողմից:</p> <p>Փոփոխությունների կառավարման գործընթացն ավարտված է, եթե անհրաժեշտ են էական փոփոխություններ՝ Վարկատուների կողմից հաստատմամբ:</p>
1.7	<p>Ստեղծել և պահել աշխատանքային վիճակում բոլոր ԲԼՍ-ի գրանցամատյանները, ներառյալ Ծրագրին առնչվող առողջություն պահպանման և աշխատանքի անվտանգություն գրառումները, թույլտվությունները և համաձայնագրերը, ինչպես առաջարկվում է շրջանակային ԲՍԿՊ-ում, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. հողի բերրի շերտի հեռացման թույլտվությունները, ՇՄԱԳ եզրակացությունները¹, շինարարական թույլտվությունները, ջրառի թույլտվությունները, անտառների մաքրումը (անհրաժեշտության դեպքում), քարհանքի մշակումը (անհրաժեշտության դեպքում),</p>	<p>Չամապատասխանություն ազգային կարգավորող և թույլտվությունների շրջանակին</p>	<p>Ազգային օրենսդրություն</p>	<p>ՃԴ-ը պայմանագրով պարտավորեցնում է Կապալառուին վարել գրանցամատյանը:</p> <p>Կապալառուն վարում է գրանցամատյանը:</p> <p>ԾԻԳ խորհրդատուն և Վերահսկող ինժեները մշտադիտարկում</p>	<p>Պատրաստվում է նախքան շինարարության մեկնարկը և պահպանվում է Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում (ՃԴ-ը վարում է գրանցամատյանը մինչ շահագործման փուլը)</p>	<p>Թույլտվությունների գրանցամատյանը գործում է և շարունակաբար թարմացվում է:</p>

¹ Ի լրումն Ծրագրի մշակման ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության, որը ձեռք կբերվի ՃԴ-ի կողմից 2023 թվականի աշնանը

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	պայթեցման աշխատանքները, կեղտաջրերի սահմանային թույլատրելի արտահոսքերը և թույլտվությունները, թափոնների տեղադրման պայմանագրերը, մթնոլորտային օդի արտանետումների սահմանաքանակները և թույլտվությունը, աշխատանքի պաշտպանության և անվտանգության լիցենզիաները, մշակութային ժառանգության միավորների տեղափոխման հետ կապված հաստատումները, ճանապարհի հետ հատվող ենթակառուցվածքների տեղափոխման հետ կապված հաստատումները:			Են, որ գրանցամատյանը պատշաճ պահպանվի և թույլտվությունները առկա լինեն:		
1.8	Ժամանակին ստանալ բոլոր պահանջվող թույլտվությունները, արտոնությունները և հաստատումները համապատասխան մարմիններից և պահպանել համապատասխանությունը դրանց պահանջներին և հաստատման պայմաններին:	Համապատասխանություն ազգային կարգավորող և թույլտվությունների շրջանակին:	Ազգային օրենսդրություն	Թուլտվությունները ստացվում են Կապալառուի կողմից	Ինչպես պահանջվում է ազգային կարգավորումներով	Համապատասխան թույլտվությունները և հաստատումները ստացված են:
1.9	Մշակել և իրականացնել շինարարության փուլի մշտադիտարկման ծրագիրը ՝ ապահովելու, որ ԲՍՄԴ-ում և ՀԲՍԿԴ-ներում նշված համապատասխան ազգային և միջազգային ստանդարտները պահպանվում են և ցուցադրել Կապալառուի ԲևՍ արդյունավետությունը:	Շինարարության փուլի համար մշակված մեղմացման միջոցառումների արդյունավետության հաստատում	ՎՁԵԲ ԻՊ1 ԵՆԲ ԲՍՍ1 ԱՁԲ ԱՊ1 Ազգային օրենսդրություն	Կապալառու ՃԴ՝ համաձայնեցում, ԾԻԳ խորհրդատու՝ վերանայում և Վերահսկող ինժեներ՝ հաստատում	Մշակվում է մինչ շինարարության մեկնարկը: Իրականացվում է Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում (մշտադիտարկման ժամանակացույցը և հաճախությունը ըստ պլանների):	Մշտադիտարկման ծրագիրը իրականացվում է:
1.10	i) Մշակել և հանձնել կիսամյակային ԲևՍ հաշվետվություններ Վարկային համաձայնագրի կնքումից հետո և մինչև շինարարության սկիզբը ԲՍՄԴ-ի առաջընթացի և Ծրագրի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ, ներառյալ ԲՍԿՀ-ի իրագործումը, ցանկացած	Ծրագրի ԲևՍ պարտավորությունների ժամանակին մշտադիտարկում և հաշվետվողականություն	Վարկատուների պահանջներ	ՃԴ-ն՝ ԾԻԳ խորհրդատուի և Վերահսկող ինժեների աջակցությամբ	i) Վարկային պայմանագրի ստորագրումից հետո և մինչև շին.իրապարկում ֆիզիկապես դիրքավորման սկիզբը,	Վարկատուներին ներկայացվող ԲևՍ մշտադիտարկման եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>անհամապատասխանությունները, ուղղիչ միջոցառումներ և այլն:</p> <p>ii) <u>Շինարարության ընթացքում</u> Տրամադրել եռամսյակային ԲևՍ հաշվետվություններ վարկատուներին ԲՍՄՊ-ի առաջընթացի և Ծրագրի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ (շինարարության ընթացքում կամ քանի դեռ վարկատուների կողմից այլ հրահանգ չի տրվել):</p> <p>iii) <u>Շահագործման ընթացքում</u> Տրամադրել ԱԶԲ-ին կիսամյակային ԲևՍ հաշվետվություններ մինչև Ծրագրի ավարտի հաշվետվության հրապարակումը, և տարեկան ԲևՍ հաշվետվություններ ՎՁԵԲ-ին և ԵՆԲ-ին՝ ԲՍՄՊ-ի առաջընթացի և Ծրագրի ԲևՍ արդյունավետության վերաբերյալ մինչև վարկի մարումը:</p>				<p>ii) Շինարարության ընթացքում,</p> <p>iii) ԱԶԲ-ին՝ կիսամյակը մեկ անգամ՝ շինարարության փուլի ավարտից հետո և մինչև Ծրագրի ավարտի հաշվետվության հրապարակումը:</p> <p>ՎՁԵԲ-ին և ԵՆԲ-ին՝ ամեն տարի շինարարության փուլի ավարտից հետո և մինչև վարկի մարումը:</p>	
1.11	<p>i. Հանձնարարել անկախ / արտաքին սոցիալական խորհրդատուի մշտադիտարկել Ծրագրի սոցիալական արդյունավետությունը վարկատուների պահանջներին համապատասխան (խորհրդատուն պետք է ունենա աշխատանքային պայմանների աուդիտի փորձ՝ Գործողություն 2.4-ն իրականացնելու համար):</p> <p>ii. Հանձնարարել անկախ / արտաքին բնապահպանական խորհրդատուի մշտադիտարկել Ծրագրի բնապահպանական արդյունավետությունը վարկատուների պահանջներին համապատասխան:</p> <p><i>Նշում՝ Այդ խորհրդատուների տեխնիկական առաջադրանքը պետք է համաձայնեցված լինի վարկատուների հետ</i></p>	Համապատասխանության Ծրագրի ԲևՍ պարտավորություններին	վարկատուների պահանջներ և կատեգորիայի ծրագրերի համար	ՃԴԾ / ՏԿԵՆ	վարկային համաձայնագրի ստորագրումից հետո ներգրաված անկախ ԲևՍ խորհրդատուները պտք է մշտադիտարկեն համապատասխան գործողությունները նախաշինարարական և շինարարական փուլերի և շահագործման առաջին երկու տարիների ընթացքում (եթե այլ բան չի պահանջվում վարկատուների կողմից):	Գործում են իրավասու անկախ խորհրդատուներ: ԲևՍ մշտադիտարկման հաշվետվությունները ներկայացվել են վարկատուներին և ՃԴ-ին: Մշտադիտարկման հաշվետվություններում նույնականացված ուղղիչ գմիջոցառումները իրականացվում են կապալառուի կամ ՃԴ-ի կողմից, ըստ անհրաժեշտության:

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
1.12	<p>Թարմացնել և իրագործել շահագործման փուլի ԲՍԿԴ-երը, ներառելով, բայց ոչ սահմանափակվելով հետևյալներով՝</p> <ul style="list-style-type: none"> Աղմուկի և թոթոռումների կառավարման պլան, Օդի որակի կառավարման պլան, Թափոնների կառավարման պլան, Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման պլան, Համայնքի, առողջության և աշխատանքի անվտանգության պլան, Արտահոսքերի կառավարման պլան, Աշխատողների վարքագծի կանոններ, Կենսաբազմազանության միջոցառումների պլան, Շահառուների ներգրավվածության պլան, Տեխնիկական սպասարկման աշխատանքների համար նաև՝ Շահագործման փուլի գնումների պլան և Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլան: <p>Մշակել մշտադիտարկման միջոցառումներ՝ որպես վերոնշյալ պլանների մաս և իրականացնել դրանք:</p>	<p>ԲևՍ բոլոր ռիսկերն ու օգուտները</p> <p>ԲևՍ կառավարման համակարգում և օպտիմալացում</p> <p>Հաստատել մեղմացման միջոցառումների արդյունավետությունը</p>	<p>ՎՉԵԲ ԻՊ1</p> <p>ԵՆԲ ԲՍՍ1</p> <p>ԱՉԲ ԱՊ1</p> <p>Ազգային օրենսդրություն</p>	<p>ՃԴ-ը ԾԻԳ խորհրդատուի հետ:</p> <p>Սպասարկման կապալառուն մշակում է աշխատանքի, հավաքագրման և գնումների պլանները:</p>	<p>ՀԲՍԿԴ-երը մշակված են միջև շահագործումը: ԲՍԿԲ-երը վերանայվում են տարեկան կտրվածքով (եթե պահանջվում է ավելի հաճախ):</p>	<p>Պլանները իրագործվել են: Մշտադիտարկումը փաստաթղթավորված է: Արդյունքները գեկուցված են ԲևՍ մշտադիտարկումների հաշվետվությունների տեսքով Վարկատուներին (ԲՍՄԴ-ի շահագործման փուլի պարտավորություններ):</p>
1.13	<p>Մշակել և իրականացնել շահագործման փուլի ԲևՍ մշտադիտարկման ծրագիր</p>	<p>Շահագործման փուլի համար մշակված մեղմացման միջոցառումների արդյունավետության վերահաստատում</p>	<p>ՎՉԵԲ ԻՊ1</p> <p>ԵՆԲ ԲՍՍ1</p> <p>ԱՉԲ ԱՊ1</p> <p>Ազգային օրենսդրություն</p>	<p>ՃԴ-ն ԾԻԳ խորհրդատուի հետ</p>	<p>Մշակել մինչ շահագործման փուլը, ապա իրագործել</p>	<p>Մշտադիտարկման ծրագիրը մշակված է և գործում է: Շահագործման փուլի ԲևՍ մշտադիտարկման արդյունքները գեկուցվել են Վարկատուներին:</p>
2	Աշխատանք և աշխատանքային պայմաններ (ՎՉԵԲ ԻՊ2, ԵՆԲ ԲՍՍ8, ԱՉԲ ԱՊ1 և Անվտանգության քաղաքականության հայտարարագիր)					
2.1	<p>Մշակել և իրականացնել Մարդկային Ռեսուրսների (ՄՌ) քաղաքականությունը՝ հաստատելով աշխատանքի և</p>	<p>Մարդկային ռեսուրսների լավարկված</p>	<p>ՎՉԵԲ ԻՊ2, ՎՉԵԲ-ի ուղեցույց "Մարդկային ռեսուրսների</p>	<p>ՃԴ-ն մշակում և ներդնում է ՄՌ քաղաքականությունը</p>	<p>Մինչ շինարարության մեկնարկը</p>	<p>ՄՌ քաղաքականություն և օժանդակ ընթացակարգեր, որոնք ընդունվել և</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>աշխատանքային պայմանների վերաբերյալ Վարկատուների քաղաքականությանը համապատասխանելու պարտավորությունը: ՄՌ քաղաքականության մեջ ներառել հստակ պարտավորություններ՝ կապված՝</p> <ul style="list-style-type: none"> • խտրականության բացակայության և հավասար հնարավորությունների հետ, • ժամանակավոր աշխատողների բնակեցման հետ, • Սեռի վրա Չիմսված Բռնության և Ոտնձգության (ՍՅԲՈ) հետ, • Նվազագույն աշխատավարձի, աշխատաժամանակի, վճարովի արտաժամյա աշխատանքի հետ, • Հարկադիր և երեխաների աշխատանքի արգելման հետ, • Աշխատողների բողոքների հետ, • Աշխատողների վարքագծի կանոնների հետ, • Աշխատողների իրավունքների մասին տեղեկատվության հասանելիության հետ, • Միավորումների և կոլեկտիվ բանակցությունների ազատության հետ, • Հիմնական և կապալառու աշխատողներին Ծրագրի ՄՌ-ի քաղաքականության դրույթների վերաբերյալ տեղեկացման հետ: <p>ՄՌ քաղաքականություն և օժանդակ</p>	<p>կառավարում, աշխատողների / վատ հարաբերությունների / կառավարման ռիսկի նվազեցում</p>	<p>քաղաքականություններ և աշխատողների փաստաթղթավորում" (2017թ.)</p> <p>SA 8000:2014, ISO 26000, Լավագույն միջազգային գործելակերպ²</p> <p>ԵՆԲ ԲՍՍՑ</p> <p>Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ</p> <p>ԱԶԲ ԱՊ1 և Անվտանգության քաղաքականության հայտարարագիր</p> <p>Աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների ազգային կարգավորումներ</p> <p>ՎԶԵԲ / ՄՖԿ³ ուղեցույց "Աշխատողների բնակեցում՝ գործընթացներ և ստանդարտներ" (2009թ.)</p>			<p>Ներկայացվել են Վարկատուներին:</p> <p>ՄՌ քաղաքականության իրագործման արդյունքների մշտադիտարկումը՝ ԲևՍ մշտադիտարկման հաշվետվությունների տեսքով գեկուցված է Վարկատուներին:</p> <p>ՃԴ-ի աշխատողների գլխավոր բողոքների գրանցամատյանը պահպանված և ներկայացվում է Վարկատուներին կիսամյակը մեկ անգամ:</p>

² Օրինակ՝ ՎԶԵԲ-ի, ՄՖԿ-ի և Հիվանդությունների Կանխարգելման և Վերահսկման Կենտրոն (ՀԿՎԿ) գեներային բռնության և ոտնձգությունների դեմ պայքարի ուղեցույց. ձևավորվող լավ գործելակերպ մասնավոր հատվածի համար (2020թ.) <https://www.ebrd.com/news/2020/new-guidance-for-private-sector-on-addressing-risks-of-genderbased-violence-and-harassment.html>

³ Միջազգային Ֆինանսական Կորպորացիա

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	<p>ընթացակարգեր, որոնք փոխանցվում են հիմնական և կապալառու աշխատողներին:</p> <p>Աշխատողների բողոքարկման մեխանիզմը պետք է հասանելի լինի բոլոր աշխատողներին, ներառյալ կապալառու և մատակարարման շղթայի աշխատողները:</p>					
2.2	<p>Պահանջել իր կապալառուներից և ենթակապալառուներից, որ համապատասխանեն Վարկատուների աշխատանքային պահանջներին՝ ստորաբաժանելով ՄՌ քաղաքականության հիմնական պահանջները ՃԴ-ի բոլոր պայմանագրային շղթաներում:</p>	<p>Ինչպես վերը թվարկված է</p>		ՃԴ	Մինչև Կապալառուի / ենթակապալառուների / խորհրդատուների հետ պայմանագրի կնքումը:	Կապալառուների / ենթակապալառուների / խորհրդատուների կողմից ընդունված և իրագործված ՄՌ քաղաքականության ապացույցները, որոնք ներկայացված են Վարկատուներին:
2.3	<p>ՃԴ-ն ապահովում է, որ Կապալառուն կմշակի և կիրագործի շինարարության փուլի Աշխատանքի և Աշխատանքային Պայմանների Կառավարման Պլանը (ԱՎՊԿՊ)՝ որպես ենթապլան ունենալով Աշխատողների բնակեցման պլանը և Տեղական հավաքագրման պլանը:</p> <p>Աշխատողների բնակեցման պլանի համաձայն՝ Կապալառուի կամ ենթակապալառուի կողմից տրամադրված ցանկացած ժամանակավոր կացարանային օբյեկտների համար (շինարարական ճամբարներ կամ մասնավոր տներ), ապահովել կացարանի ստանդարտները, որոնք համապատասխանում են ՄՖԿ/ՎՁԵԲ Աշխատողների բնակեցման ուղեցույցի պահանջներին:</p> <p>ԱՎՊԿՊ-ի ցանկացած էական փոփոխություն պետք է վերահաստատվի ՃԴ-ի և Վարկատուների կողմից:</p>	<p>Աշխատանքի և աշխատանքային պայմանների լավարկված կառավարում:</p> <p>Բոլոր բողոքները հաշվի են առնվում և պատշաճ կերպով հասցեագրվում:</p> <p>Աշխատողների անվտանգ աշխատանքային և կենսապայմաններ:</p>		<p>Կապալառուն պետք է մշակի և ներկայացնի ԱՎՊԿՊ-ը Վերահսկող ինժեների հաստատմանը, ԾԻԳ խորհրդատուի վերանայմանը և ՃԴ-ի համաձայնեցմանը:</p> <p>ՃԴ-ն ԱՎՊԿՊ-ը կներկայացնի վարկատուներին՝ ստորագրման համար:</p> <p>Վերահսկող ինժեները մշտադիտարկում է ամսական</p>	<p>ԱՎՊԿՊ-ը ավարտվել և ստորագրվել է Վարկատուների կողմից մինչև Կապալառուին տրված չառարկելու ծանուցումը:</p>	<p>ԱՎՊԿՊ-ն ներկայացված և ընդունված Վարկատուների կողմից:</p> <p>ԱՎՊԿՊ-ի իրականացման մշտադիտարկումը զեկուցված է Վարկատուներին՝ ԲևՍ մշտադիտարկումների հաշվետվություններով:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
				ստուգումների միջոցով:		
2.4	<p>ՃԴ-ը Ծրագրի շինարարության փուլում պետք է իրականացնի առնվազն երկու անկախ աշխատանքային աուդիտ՝ հաստատելու, որ նախագիծը համապատասխանում է Վարկատուների աշխատանքային պահանջներին:</p> <p>ՃԴ-ը պետք է աշխատանքի աուդիտ իրականացնող առաջարկվող աուդիտորի տեխնիկական առաջադրանքը և անձանց կենսագրությունները ներկայացնի Վարկատուների հաստատմանը:</p>	Բարելավված ՄՌ կառավարում և ավելի անվտանգ աշխատանքային պայմաններ:		ՃԴ-ը՝ ներգրավում է արտաքին աշխատանքային աուդիտոր և կազմակերպում է Ծրագրի երկու աշխատանքային աուդիտ (տես Միջոցառում 1.11):	Առաջին աուդիտը իրականացվել է Ծրագրի աշխատուժի մոբիլիզացման ժամանակ, իսկ երկրորդը՝ շինարարական փուլի պիկ փուլում:	<p>Վարկատուների կողմից ընդունված աշխատանքի աուդիտի հաշվետվությունները:</p> <p>Վարկատուներին ներկայացված և նրանց կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքը և անձանց կենսագրությունները:</p>
3	Ռեսուրսների արդյունավետություն, աղտոտման կանխարգելում և վերահսկում (ՎՉԵԲ ԻՊ3, ԵՆԲ ԲՍՍ3, ԱԶԲ ԱՊ1)					
3.1	Իրագործել բոլոր ՀԲՍԿՊՏ-երը՝ կապված օդի, աղմուկի, թրթռումների, հողի, թափոնների, ջրի, վտանգավոր նյութերի, կենսաբազմազանության և այլնի հետ, ինչպես նշված է ԲՍՄԴ-ի Միջոցառումներ 1.2, 1.4, 1.6-ում և այլ հարակից միջոցառումներում:		ՎՉԵԲ ԻՊ3 ԵՆԲ ԲՍՍ3 ԱԶԲ ԱՊ1 Ազգային օրենսդրություն ԵՄ շրջաբերականներ			
3.2	<p>Շահագործման փուլում այն գույքերի համար, որոնք մոտ աղմուկը բարձր է ԱՀԿ 2021/ հայկական ստանդարտներից, գործադրել հետևյալ տարբերակները.</p> <ul style="list-style-type: none"> • Լրացուցիչ մեղմացնող միջոցառումներ (ինչպիսիք են տների աղմկամեկուսացումը և աղմկակլանիչ պատուեշները), իսկ եթե դրանք արդյունավետ չեն, ապա՝ <ul style="list-style-type: none"> ○ Տնային տնտեսությունների ֆիզիկական տեղափոխում ազդեցության ենթարկված գույքից, կամ ○ Գույքի սեփականատերերի հետ սեփականության իրավունքից հրաժարվելու պայմանագրերի ստորագրում: 	Մարդկային ընկալիչների վրա աղմուկի ազդեցության խուսափում / նվազեցում:	ՎՉԵԲ ԻՊ4 ԵՆԲ ԲՍՍ9 ԱԶԲ ԱՊ1 Ազգային օրենսդրություն	ՃԴ-ը տրամադրում է ռեսուրսներ Ծրագրի ազդեցության տակ գտնվող անձանց հետ համաձայնեցված մեղմացման միջոցառումներն իրականացնելու համար:	Հիմնված է աղմուկի մշտադիտարկման արդյունքների վրա:	Աղմուկի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, լրացուցիչ մեղմացման ջանքերի ապացույց, ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների հետ խորհրդակցությունների և համաձայնեցված լուծումների ապացույցներ: Համաձայնեցված լուծումները իրականացված են:

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
3.3	Թարմացնել մանրամասն նախագիծը՝ ներառելու աղմուկի մեղմացման միջոցառումներ, ինչպիսիք են աղմուկի պատնեշները, ձայնամեկուսիչ պատուհանները, բուսականության էկրանը և այլն համապատասխան վայրերում, համաձայն ՇՄՍԱԳ մոդելավորման արդյունքների:			ՃԴ-ը և Կապալառում:	Մանրամասն նախագծի թարմացման ընթացքում:	Աղմուկային պատնեշները կամ աղմուկի մեղմացման այլ միջոցառումներ ներառված են մանրամասն նախագծի մեջ:
4	Առողջություն, աշխատանքի անվտանգություն (ՎՁԵԲ ԻՊ4, ԵՆԲ ԲՍՍ9, ԱՁԲ ԱՊ1)					
4.1	<p>Ճանապարհային անվտանգության աուդիտ՝ նախաշինարարական փուլ</p> <p>Նշանակել ճանապարհային անվտանգության իրավասու անկախ աուդիտոր, որը կկատարի ճանապարհային Անվտանգության Աուդիտ (ՃԱԱ) մանրամասն նախագծման համար (Փուլ 2)՝ համաձայն ԵՄ 2008/96/EC շրջաբերականի:</p> <p>ՃԴ-ը նախագծային թիմից պետք է վերանայել ճանապարհային անվտանգության աուդիտի հաշվետվությունը և վերջնական նախագծում ներառել տեխնիկապես և տնտեսապես հնարավոր բոլոր առաջարկությունները:</p> <p>Հաճախորդը պետք է կիսվի Վարկատուների հետ ճանապարհային Անվտանգության Աուդիտի հաշվետվությամբ, կհաստատի ընդունված առաջարկությունները և կհաստատի, որ iRAP արձանագրության համաձայն նվազագույնը 3 աստղ ձեռք կբերվի բոլոր կատեգորիաների կամ ճանապարհների օգտագործողների համար: Եթե առաջարկությունները չեն ընդունվի, ՃԴ-ը Վարկատուներին կհաստատի, թե ինչու և ինչ այլ մեթոդ կընդունվի ճանապարհային անվտանգության խնդիրները կառավարելու/մեղմացնելու համար:</p>	<p>Անվտանգության ռիսկերի կառավարում:</p>	<p>ԵՄ 2008/96/EC շրջաբերականը և ԵՄ 2019/1936 շրջաբերականը "Ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման վերաբերյալ"</p> <p>D2004/54/EC շրջաբերականը "Տրանսեվրոպական ցանցում թունելների համար անվտանգության նվազագույն պահանջներ"</p> <p>ՎՁԵԲ ԻՊ4</p> <p>ԵՆԲ ԲՍՍ9</p> <p>ԱՁԲ ԱՊ1</p> <p>Ազգային օրենսդրություն</p>	<p>ՃԴ-ը կնշանակի ճանապարհային անվտանգության անկախ աուդիտոր:</p> <p>Ճանապարհային անվտանգության աուդիտորը ավարտում է անվտանգության աուդիտը:</p> <p>ՃԴ-ը վերանայում է ՃԱԱ-ի արդյունքները և միջոցներ է հատկացնում՝ բացահայտումներին/առաջարկություններին անդրադառնալու համար:</p>	<p>Մանրամասն նախագծի վերջնական մշակման ժամանակ:</p>	<p>Ճանապարհային անվտանգության աուդիտի (Փուլ 2) հաշվետվությունը կիսվել է Վարկատուների հետ:</p> <p>Իրականացվել են ճանապարհային անվտանգության աուդիտի առաջարկությունները:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
4.2	<p>Ճանապարհային անվտանգության աուդիտ՝ նախաշահագործման փուլ</p> <p>Ճանապարհի շինարարության ավարտին և ճանապարհի բացումից առաջ նշանակել ճանապարհային անվտանգության անկախ աուդիտոր, որը կանցկացնի ճանապարհային անվտանգության նախաբացման աուդիտ (Փուլ 3)՝ համաձայն ԵՄ 2008/96/EC շրջաբերականի: Գնահատականի անվտանգության աուդիտորը կհաստատի ճանապարհային անվտանգության բոլոր առաջարկությունները, որոնք ընդունվել են Փուլ 2-ի աուդիտի ընթացքում, կամ/ և ճանապարհային անվտանգության խնդիրները կառավարելու/մեղմացնելու համար համաձայնեցված այլ մեթոդներ, որոնք ամբողջությամբ կիրառվել են և ճանապարհային անվտանգության լրացուցիչ խնդիրներ չեն հայտնաբերվել:</p>			<p>ՃՂ-ը նշանակում է ճանապարհային անվտանգության անկախ աուդիտոր:</p>	<p>Ճանապարհի շահագործման հանձնելուց 5-6 ամիս առաջ:</p>	<p>Ճանապարհային անվտանգության աուդիտի (Փուլ 3) հաշվետվությունը կիսվել է Վարկատուների հետ:</p> <p>ՃԱԱ առաջարկությունները իրագործված են:</p>
5	Հողերի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր վերաբնակեցում (ՎՉԲ ԻՊ5, ԵՆԲ ԲՍՍ6, ԱՉԲ ԱՊ2)					
5.1	<p>Նախապատրաստել, հրապարակել և իրականացնել Ծրագրի Տարաբնակեցման Պլանը (ՏՊ)՝ հիմնվելով Ծրագրի Տարաբնակեցման Շրջանակի (ՏՇ) և Վարկատուների քաղաքականության պահանջների վրա ամրագրված սկզբունքների և պահանջների վրա:</p> <p>ՏՊ-ի իրականացումը ստուգվում է Համապատասխանության հաշվետվություն(ների) միջոցով, որը մշակվում է Արտաքին տարաբնակեցման մշտադիտարկողի կողմից և ներկայացվում է Վարկատուների հաստատմանը (տես Միջոցառում 1.11-ը):</p> <p>Արտաքին մշտադիտարկողի տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է Վարկատուների հաստատմանը:</p>	<p>Ծրագրի Ազդակիր Անձանց (ԱԱ) կենսապահովման վրա ազդեցությունից խուսափելու / մեղմելու:</p> <p>Կոնֆլիկտների կանխարգելում / ԱԱ հետ հարաբերությունների բարելավում:</p>	<p>ՎՉԲ ԻՊ 5 ԵՆԲ ԲՍՍ6 ԱՉԲ ԱՊ2, ԱՉԲ-ի Հարկադիր տարաբնակեցման երաշխիքներ՝ լավ գործելակերպի իրագործման ձեռնարկ (2012թ.) Ազգային օրենսդրություն</p>	<p>ՃՂ-ը Տարաբնակեցման և Կենսամիջոցների վերականգնման խորհրդատուների աջակցությամբ:</p> <p>ՃՂ-ի կողմից վարձած արտաքին տարաբնակեցման մշտադիտարկող:</p>	<p>ՏՊ-ը իրագործվում է և կորցրած ակտիվների փոխհատուցումները վճարվում են մինչև շինարարության մեկնարկը: Կենսամիջոցների վերականգնման ավարտվում է մինչև բոլոր ազդակիր անձանց վերջնական հատկացումը:</p>	<p>Տարաբնակեցման պլանը հաստատված է բոլոր կողմերի կողմից, հրապարակված է և իրագործված:</p> <p>Համապատասխանության հաշվետվություն(ները)՝ ներկայացված և ընդունված են Վարկատուների կողմից:</p> <p>Արտաքին մշտադիտարկողի տեխնիկական առաջադրանքը հաստատված է Վարկատուների կողմից</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
						(համաձայն Միջոցառում 1.11-ի):
5.2	Իրականացնել տարաբնակեցման ավարտի առուդիտ Տարաբնակեցման պլանն ամբողջությամբ իրականացնելուց հետո, ներառյալ կենսամիջոցների վերականգնման միջոցառումների ամբողջական իրականացումը:	Տարաբնակեցման պլանի իրականացման արդյունավետության գնահատում և ԱՎ վրա բացասական ազդեցությունների բացակայություն:		ՃԴ-ի կողմից վարձած արտաքին տարաբնակեցման խորհրդատու:	Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների ավարտից հետո՝ համաձայն Տարաբնակեցման պլանի ժամանակացույցի	Ավարտական հաշվետվության տեխնիկական առաջադրանքը համաձայնեցված է Վարկատուների կողմից: Ավարտական առուդիտի հաշվետվությունը հաստատված է Վարկատուների կողմից:
6	Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում (ՎՉԵԲ ԻՊ6, ԵՆԲ ԲՍՍ4, ԱՉԲ ԱՊ1)					
6.1	Ապահովել Կենսաբազմազանության Միջոցառումների Պլանի (ԿՄՊ) իրականացումը, ներառյալ կենսաբազմազանության մեղմացման և մշտադիտարկման հատուկ միջոցառումները՝ նպատակ ունենալով հասնել "մաքուր շահույթի" / «առանց մաքուր կորուստի», որտեղ անհրաժեշտ է:	Կենսաբազմազանության կորստից խուսափելը և կենսաբազմազանության կարևորագույն միջավայրի և առաջնահերթ կենսաբազմազանության առանձնահատկությունների պաշտպանությունը:	ՎՉԵԲ ԻՊ6 և ուղեցույցը ԻՊ6 (2020թ.) համար: ԵՆԲ ԲՍՍ4 և ուղեցույց՝ Կենսաբազմազանության և Էկոհամակարգերի ստանդարտի վերաբերյալ (2018թ.)	ՃԴ-ը՝ խորհրդատուների աջակցությամբ Վարկատուները հաստատում են	ԿՄՊ-ը մշակվել է նախքան շինարարությունը և իրականացվում է Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում և համապատասխանաբար թարմացվում է	ԿՄՊ-ը արդյունավետ իրագործված է: Բնական կենսավայրերի մաքուր կորուստ և կրիտիկական կենսավայրերի մաքուր շահույթ չի ստացվել:
6.2	Ապահովել, որ որակյալ անձնակազմ է (կենսաբազմազանության փորձագետներ) նշանակված Կապալառուի և Վերահսկող ինժեների կողմից համապատասխանաբար կենսաբազմազանության իրականացման և մշտադիտարկման համար, և համապատասխան բյուջեները հաստատված են (տես նաև Միջոցառում 1.4-ը):	Կենսաբազմազանության առանձնահատկությունների պաշտպանությունը:	ԱՉԲ ԱՊ1 Ազգային օրենսդրություն	Կապալառու Վերահսկող ինժեներ	Մինչ շինարարությունը	Կենսաբազմազանության որակավորված մասնագետ է նշանակվել է Կապալառուի և Վերահսկող ինժեների մոտ:
6.3	Մշակել և իրագործել Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլան՝ հիմնվելով ԿՄՊ-ում (Կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարություն բաժնում) մշակված սկզբունքների վրա:			ՃԴ-ն՝ ԾԻԳ խորհրդատուի աջակցությամբ	Շինարարության մեկնարկից առնվազն երեք ամիս առաջ	Կենսաբազմազանության փոխհատուցման կառավարման պլանն ընդունված է արդյունավետ իրագործված:

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
6.4	<p>Իրականացնել i) Նախաշինարարական հետազոտություններ, ինչպես սահմանված է ԿՄՊ-ում, և ii) լրացուցիչ դաշտային հետազոտություններ Ծրագրի այն բաղադրիչների համար, որոնք գտնվելու վայրը ներկայումս անհայտ է (ներառյալ ԶՅՏԿ-երը, դրանց մուտքի ճանապարհները, շինարարական ճամբարները, կայանման վայրերը, բետոնի / ասֆալտի գործարանները), առաջարկվում են ուսումնասիրված տարածքներից դուրս:</p> <p>Հիմնվելով ուսումնասիրությունների վրա՝ համապատասխանաբար թարմացնել ԿՄՊ-ը (անհրաժեշտության դեպքում) և համաձայնել այն վարկատուների հետ:</p>			Կապալառու	Նախքան Ծրագրի բաղադրիչի տեղակայման մասին որոշում կայացնելը	<p>Ուսումնասիրություններն ավարտվել են և անհրաժեշտության դեպքում մշակվել են մեղմացման միջոցառումներ:</p> <p>Թարմացված ԿՄՊ-ը հաստատված է Կարկատուների կողմից:</p>
6.5	Արդիականացնել մանրամասն նախագիծը՝ ներառելու վայրի կենդանիների համար անհրաժեշտ անցուղիները՝ համաձայն ԼՄԳ-ի և ԿՄՊ-ի առաջարկությունների:			ՃԴ-ը՝ Կապալառուի հետ՝ նախագծի թարմացում	Մանրամասն նախագծի թարմացման ընթացքում	Վայրի կենդանիների անցուղիները ներառված են մանրամասն նախագծի մեջ:
6.6	Պահպանել կանաչ կամուրջները / գետնանցումները / հեղեղատարները, որոնք նախագծված են որպես վայրի կենդանիների անցուղիներ՝ համաձայն ԼՄԳ-ի և ԿՄՊ-ի առաջարկությունների:			ՃԴ	Շահագործման/ տեխ. սպասարկման ընթացքում	Միջոցառումը արդյունավետ իրագործված է:
6.7	<p>Պահպանել սեզոնային արգելքները, ինչպես սահմանված է ԿՄՊ-ում:</p> <p>Հնարավորինս սահմանափակել երկրորդական ճանապարհները տեխնիկական սպասարկման և DK35+000 և DK60+000 միջակայքում ընկած տեղադրման վայրերի համար:</p>			Կապալառու	Շինարարության ընթացքում	Միջոցառումը արդյունավետ իրագործված է:
7	Մշակութային ժառանգություն (ՎՉԵԲ PR 8, ԵՆԲ ԲՍՍ10, ԱՉԲ ԱՊ1)					
7.1	Մշակել, իրապարակել և իրագործել մշակութային ժառանգության մեղմացման միջոցառումները, որոնք ներառված են Մշակութային ժառանգության	Մշակութային ժառանգության պահպանումը	Ազգային օրենսդրություն	ՃԴ-ը մշակութային ժառանգության կարգավորող մարմնի հետ	ՄԺԿՊ-ը ամփոփվում և իրապարակվում է մինչ շինարարության մեկնարկը:	ՄԺԿՊ-ը ներկայացված է Կարկատուների հաստատմանը:

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
	Կառավարման Պլանում (ՄԺԿՊ) և ԲՍԿՊ-ում , ներառյալ մշակութային ժառանգության հայտնաբերված վայրերի գրանցումը և օրենքով պահանջվող պաշտպանության միջոցառումների կիրառումը:	Յայտնի մշակութային ժառանգության վրա ազդեցության ռիսկի նվազեցում	ՎՉԵԲ ԻՊ8, ՎՉԵԲ-ի ուղեցույց ԻՊ8-ի (2023) համար ԵՆԲ ԲՍՍ10 ԱԶԲ ԱՊ1	համագործակցությամբ Կապալառու Վերահսկող ինժեներ		
7.2	Վերահաստատել ՄԺԿՊ-ի իրականացումը Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվության միջոցով (հաստատված Վարկատուների կողմից): Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվություն տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է Վարկատուներին:	Մշակութային ժառանգության վնասման կամ ոչնչացման կանխարգելում		Արտաքին մշտադիտարկող խորհրդատու	Մինչ շինարարական աշխատանքների ավարտը արտաքին աուդիտի ավարտական հաշվետվությունը մշակվում և ներկայացվում է Վարկատուներին	Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվության տեխնիկական առաջադրանքը հաստատված է Վարկատուների կողմից: Արտաքին աուդիտի ավարտական հաշվետվությունը հաստատված է Վարկատուների կողմից:
7.3	Մշակել և ներդնել Պատահական գտածոների ընթացակարգը⁴: Յամոգվել, որ դրա իրականացումը վերահսկվում է տեղում Կապալառուի մշակութային ժառանգության փորձագետի և Վերահսկող ինժեների մշակութային ժառանգության մշտադիտարկողի կողմից:			Կապալառու Վերահսկող ինժեներ	Ընդունում՝ մինչ շինարարությունը: Կապալառուի աշխատողների վերապատրաստում՝ մինչ շինարարությունը: Իրականացում՝ հողային աշխատանքների ժամանակ:	Շինարարությունից առաջ կարգը ընդունված է: Շինարարական կապալառու աշխատողներին տրամադրվել է համապատասխան ուսուցում: Գտածոների դեպքում ընթացակարգը արդյունավետ կիրառվում է:

⁴ Այս ընթացակարգի ձևանմուշը բերված է ՎՉԵԲ-ի 2023թ.-ի ԻՊ8-ի համար ուղեցույցում <https://www.ebrd.com/documents/environment/guidance-note-performance-requirements-8-cultural-heritage.pdf>, իսկ ազգային օրենսդրական պահանջները սահմանված են Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ ՀՕ-261 օրենքում (1998թ.)

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
8	Տեղեկատվության հրապարակում և շահառուների ներգրավում (ՎՁԵԲ ԻՊ10, ԵՆԲ ԲՍՍ2, ԱԶԲ ԱՊ1 և 2 և Վարկատուների քաղաքականությունների խաչաձև պահանջներ)					
8.1	<p>Իրագործել Ծրագրի Շահառուների ներգրավածության Պլանը (ՇՆՊ), ներառյալ տեղեկատվության հրապարակման և հասանելիության պահանջները:</p> <p>Պարբերաբար վերանայել, թարմացնել և հրապարակել ՇՆՊ-ը, ըստ անհրաժեշտության:</p>	<p>Տեղեկատվության շարունակական տարածում և ներգրավվածություն ազդակիր շահագրգիռ կողմերի հետ:</p> <p>Կոնֆլիկտների / բողոքների կանխարգելում:</p> <p>Շահագրգիռ կողմերի և տեղական համայնքների հետ հարաբերությունների բարելավում:</p> <p>Ապահովել, որ բողոքները պատշաճ կերպով լուծված են:</p>	<p>ՎՁԵԲ ԻՊ10, Տեղեկատվության հասանելիության շրջաբերական (2019թ.), ԻՊ10-ի (2023թ.) համար ուղեցույց բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ:</p> <p>ԵՆԲ ԲՍՍ2 (2022թ.), Թափանցիկության քաղաքականություն (2011թ.), և Շահառուների ներգրավվածության ուղեցույց (2020թ.):</p> <p>ԱԶԲ ԱՊ1 և 2 և Տեղեկատվության հասանելիության քաղաքականություն (2018թ.):</p> <p>Ազգային օրենսդրություն:</p>	ԾԴ	Ծրագրի ողջ կենսացիկլի ընթացքում	<p>ՇՆՊ-ի իրագործվում է (ապացույցները կարող են տրամադրվել), թարմացվում և հրապարակվում է:</p> <p>Բոլոր երաշխիքների մասին հաշվետվությունները կիրառարակվեն Վարկատուների կողմից անգլերենով և ՃԴ-ի կողմից՝ անգլերենով և հայերենով:</p>
8.2	<p>Նշանակել հաղորդակցման (կապի) և շահառուների ներգրավման իրավասու մասնագետ, որը պատասխանատու կլինի ՇՆՊ-ի իրագործման համար:</p>	<p>Ապահովել, որ բողոքները պատշաճ կերպով լուծված են:</p>	<p>Ազգային օրենսդրություն:</p>	ԾԴ	Մինչ շինարարությունը	<p>Շահառուների ներգրավման իրավասու մասնագետը նշանակված է և ղեկավարում է ՇՆՊ-ը, մշակում է հաշվետվությունները:</p>
8.3	<p>Նշանակել հանրության հետ կապի մասնագետներ, ովքեր պատասխանատու կլինեն Ծրագրի տարածքների մակարդակով ՇՆՊ-ի իրականացման համար (համոզվել, որ առնվազն մեկը կին է):</p>	<p>Ապահովել, որ բողոքները պատշաճ կերպով լուծված են:</p>	<p>Ազգային օրենսդրություն:</p>	Կապալառու	Մինչ շինարարության մեկնարկը	<p>Հանրության հետ կապի մասնագետները նշանակված են,</p> <p>մշակում և ներկայացնում են ՇՆՊ-ի իրագործման ամսական հաշվետվությունները ՃԴ-ին:</p>

No.	Միջոցառումը	Բնապահպանական և սոցիալական ռիսկեր (պարտավորություններ / օգուտներ)	Պահանջներ (օրենսդրական, վարկատուների ստանդարտներ, լավագույն գործելակերպ)	Ռեսուրսներ, ներդրումային կարիքներ, պատասխանատվություն	Ժամանակացույցը	Թիրախային և գնահատման չափանիշներ հաջող իրականացման համար
8.4	Համայնքների և արտաքին շահագրգիռ կողմերի համար ներդնել բողոքների մեխանիզմը՝ Վարկատուների պահանջներին համապատասխան՝ ներառելով, ի թիվս այլոց, բողոքների անանուն և գաղտնի ուղիները և լուծումները:			ՃԴ	Որոշ հատվածներում մինչ շինարարությունը բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ իրականացվում է իրազեկում: Սպասարկման փուլում՝ Ծրագրի ողջ ցիկլի ընթացքում:	Բողոքարկման մեխանիզմը արդյունավետորեն ներդրվել և հաղորդակցվել է: Բողոքների գրանցամատյանը արտացոլում է յուրաքանչյուր բողոքի կարգավիճակը և ձեռնարկված գործողությունները: Բողոքների արդյունքները վերլուծվում և գեկուցվում են Վարկատուներին ԲԱՍ մշտադիտարկման կանոնավոր հաշվետվություններով: